# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Կոտայքկոշ ԲԲԸ-ն ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/09 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Կոտայքկոշ | Կանացի համազգեստ տաբատով | - | Կոտայքկոշ ԲԲԸ | Համազգեստ /Իգական սեռի / Բաճկոնը՝ (երկարաթև) մուգ կապույտ Պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ), աստառով (8-С5-ВШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100 գ/մ2 խտությամբ), կոճկվում է կենտրոնական շղթայով, հետևամասը և առաջամասը՝ վերին կտրվածքով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ են՝ ուղղանկյուն կափույրներով: Կողային գրպանները՝ շեղակի կտրվածքով, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | շղթայով կոճկվող: Բաճկոնը գոտիով է՝ կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը՝ ծալովի: Բաճկոնի թևքերը նեղ թեզանիքներով, էլաստիկ ժապավենով են: Ձախ կրծքին արծաթագույն թելով ասեղնագործ լոգոտիպ - 210 հատ Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ կտորից (իգական սեռի) (175գ/մք խտությամբ, 33% վիսկոզա, 67% Պ/Է) ±3%, ծալովի օձիքով, կրծքամասում՝ կոճակով կոճկվող կափույրով և շերտակարով վրադիր գրպաններ, ուղիղ գոտիով, կարագծերին էլաստիկ ժապավեններ, հետևամասը՝ վերին կտրվածքով, կոճկվում է 8 կոճակով, ձախ կտրվածքը՝ շերտակարով, կոճակով կոճկվող թեզանիքներով: Վերնաշապիկի թևքերը երկար են, կոճակով կոճկվող թեզանիքներով – 210 հատ Պիլոտկա տեսակի գլխարկներ՝ Գլխարկ պիլոտկա (կանացի),պատրաստվում է մուգ կապույտ գույնի կիսաբրդյա գործվածքից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ), բաղկացած երկարացված հատակի 2 մասից, 2 պատից և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կենտրոնական մասում իրար վրա ծալվող 2 փեշիկից: Վերծալված եզրակարերը մուգ կապույտ գույնի են և ձախ կողմում ունեն 3 օղանցք: Աստառը պատրաստվում է (8-C5-BШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100 գ/մ2 խտությամբ), իսկ ներսի ժապավենը բնական կաշվից՝ 30 մմ լայնությամբ: Առջևի կենտրոնական մասում ասեղնագործվում է լոգոտիպ, որը նախապես (մինչև մատակարարումը) համաձայնեցվում է Գնորդի հետ: 210 հատ Կանացի փողկապ՝ Կանացի փողկապ՝ մուգ կապույտ գույնի, երկթև բանտ, որի թևերն ունեն 10 սմ երկարություն, 4,5 սմ լայնություն, 45 աստիճանի բացվածք: Նախքան փողկապների պատրաստումը փողկապների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը: 210 հատ Տաբատը՝ մուգ կապույտ՝ Պատրաստվում է մուգ կապույտ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ, ուրվագիծը՝ ուղիղ, երկու կողային գրպաններով, հետնամասում՝ ներկարված, մեկ կոճակով կոճկվող գրպան: Տաբատը՝ շղթայով փակվող, գոտին կոճկվում է կոճակ-օղակով, գոտու վրա 8 հատ գոտեմակ օղակներ են, - 210 հատ Ժիլետ կանացի մուգ կապույտ՝ պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից(67% բուրդ, 33%, պոլիէսթեր, 317 գ/մ2 խտությամբ), աստառով: Կոճկվում են 4 օղակ-կոճակով:Վիզը V-աձև է՝ եզրագծերով: Մեջք՝ կենտրոնական կարով և դեպի թևքեր բարձրացված կարերով:Հետևի երեսպատման կենտրոնում ծալքով: - 210 հատ Մետրոպոլիտենի տարբերանշան (լոգո) – 420 հատ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ОАО Котайккош в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/09 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |